

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԱՅՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ ԵՎ ԴՐԱ
ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ XIX ԴԱՐՈՒ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Պ. Հ. ՀԱԿՈՐՅԱՆ

Ռուսաց պետության կամ «Հանուրց հիստիսականաց վեհագունից» ուղակ-
ցության մեջ հայոց քաղաքական ազատագրության վերաբերյալ մեր նախնիները,
դեռևս XVII դարում, հյուսիս են լեզենդ, որի արձագանքները գտնում ենք միև-
նույն և ուշ շրջանների հայ մատենագրության մեջ¹։ Որքան լայն էին բացվում
ցարիզմի առջև կասպից ծովի հարավ-արևելյան ափերը ու Անդրկովկասը նվա-
ճելու հորիզոնները, որքան առաջ էին շարժվում ռուս հաղթական զնդերը դեպի
հարավ, այնքան ավելի էր ոգևորվում մեր ժողովուրդը, բորբոքվում նրա երևա-
կայությունը։ Հնօրյա դիվանական վավերաթղթերը պերճախոս վկայություն-
ներ են տալիս այդ առթիվ, իսկ հուշագրություններն ու այլ կարգի նյութեր՝
հավերժացնում սլատմական անցքեր, որոնցից արժե հիշել կոմս Վալերիան
Ջուբովի կովկասյան արշավանքը՝ վերարտադրված Հարություն Արարատյանի
կիսագեղարվեստական ինքնակենսագրության մեջ²։

¹ Վաղուց մատնացույց են արված ներսես Մոկացու՝ 1621-ին գրված ներբողյանի այլ
տողերը։

Ի հարց 'ի ի պապանց ուսաք, յառաջէն սրբոցն ասացան,
Հիսուսու հաւէն առնուն մեր ծաղկունքս և խիստ զօրանան
եւ տապըն խորշակահար՝ ծաղկընկէց առնէ առժամայն...

(Ա. Հ. Վ. հ. ն. ի. ս. յ. ա. ն., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գ. II, Երևան,
1959, էջ 510։ Ղ. Ա. ի. շ. ա. ն., Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 622)։ Հայոց մելիքների՝
1699 թ. ապրիլի 29-ին, Պետրոս Մեծին ուղղված աղերսագրում ևս ասված է. «Մենք վաղեմէ
ունէաք ումուտ մեր սուրբ գրոցն և նախնեացն, որ քեզանով պիտի լինի մեզ իմտաւ աշխարհի
և ամենայն քրիստոնէից հաւատոցն արձակութիւն» («Армянно-русские отношения в XVIII
веке», փաստաթղթերի ժողովածու ակագ. Ա. Հովհաննիսյանի խմբագրությամբ, հ. II, մասն I,
Երևան, 1964, էջ 185)։ Նույն այս հնօրյա լեզենդը՝ 1701 թ. հուլիսի 11—14-ին Պետրոս
Մեծին ներկայացված մի ղեկուցագրում, Խորաշիլ Օրիի վերաշարագրությամբ դարձել է.
«Яко сынове Адамовы ожидали надёжно пришествие Мессиево, который бы их избавил
от вечной смерти, так убогий тот (իմա՝ Հայ—Պ. Հ.) народ всегда жил и ныне живет
с надеждою помощи и способа вашего царского величества. Им образом предрекоша
пророцы, что в последния времена неверныя будут зело свирепыя и будут понужданы
христиан во еже приняти прескверный их закон, и тогда придет из августейшаго
Московского дому великий, некоторый принцепс, который будет многим храбрее, нежели
Александр Великий, который Королевство Арменское возьмет и христиан избавити
будет» (ն. տ., էջ 266)։ Ավելի ուշ, 1825 թվականին, մի առիթով, ներսես Աշտարակեցիի ասել է.
«...Դեռ 200 տարի առաջ հայը հովանավորություն սպասում էր միայն Ռուսաց պետությունից... մեր
նախնիներն ու հայրերը, շարժանաշուով այդ հովանավորությանը, կտակեցին իրանց երեխա-
ներին, թե երբ կգա այդ հովանավորությունը, հայտնեն իրանց գերեզմաններին, և այն ժամանակ
կհանդատանա իրանց աճյունը» (բերում ենք ըստ Լեոյի թարգմանության, տե՛ս նույնի «Պատ-
մություն երևանի հայոց թեմական հոգևոր դպրոցի», Թիֆլիս, 1914, էջ 96)։

² Տե՛ս «Жизнь Артемия Араратского уроженца селения Вагаршапат близ горы Ара-
рат, ч. II, Санктпетербург, 1813.

Այս ամենը, սակայն, արժարժվող հարցի նախապատմությունն է: Քիչ թե շատ կատարյալ զեղարկեստական գործեր՝ հայոց քաղաքական ազատագրության համար ուսանելի տված հույսերի առթիվ, հրապարակ են գալիս միայն XIX դարու սկզբներից, այն է՝ հայոց նոր գրականության ձևավորման խանձարուրային շրջանից:

Ծիշտ է, հայոց նոր գրականության գաղափարական ու գեղարվեստական շահախնդրությունները նշմարվում են դեռևս XVII—XVIII դարերում, բայց բուն նոր գրականությունը, իբրև հասարակական գիտակցության տարրորոշված ձև, իրեն ղգալ է տալիս Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելուց հետո: Այդ նոր գրականության սկիզբը իրավամբ ճանաչված է «Վերք Հայաստանի»³ պատմավեպը, իսկ վերջինս հայոց նոր պատմության ամենամեծ շրջադարձը հավերժացնող և մեր գալիք հոգևոր թռիչքը նախորոշող ամենաճանաչված հուշարձանն է:

«Վերք Հայաստանի», — ինչպես իրավացիորեն գրել է ակադեմիկոս-բանաստեղծ Ավ. Իսահակյանը, — «Մեր բողոքի, մեր ըմբոստության, մեր գոյամարտի հերոսապատումն է: Նա մեր դարի շողշողուն է պոսն է, մեր սխրագործությունների դուցազնավեպը պարսից ոճերների դեմ: Նա ուս մեծագույն ժողովրդի հետ մեր սրտագին դաշնագիրն է՝ կյանքի ու մահվան ճակատամարտերում նվիրականացած»⁴:

Արուվյանը «Վերքի» ստեղծմանը ձեռնարկեց 1841 թվականի փետրվարին: Սակայն, մինչև այդ, ինչպես Արուվյանի, այնպես էլ XIX դարու առաջին կեսի ստեղծագործողների մոտ, ուսանելի աշակցությամբ Հայաստանի ազատագրության թեման արդեն բանաստեղծական հորինվածքների նյութ էր դարձել: Մինչև անգամ, հնօրյա սաղմոսերգությունների նման, հայ անանուն ստեղծագործողները ոգում էին. «Այսօր է, զոր արար Տէր, եկեալ ժողովեցարուք, եղբարք մեր, ընդ հովանեալ գալիսօնի Քրիստոսաւր ոռոսաց կայսրութեանն, ցնծասցուք և ուրախ լիցուք, զի այց արար մեզ **Բարձրեալն, ազատեցաք ի դերութեանց, և դրօշակք թագաւորութեանց մերոց ի ձեռս որդւոցն. Հայկազնէից զարհուրեցուցանեն զնախաշար թշնամիս նոցին**»⁵:

Որովհետև անժանոթ են այս և նմանօրինակ նյութերը, կամ էլ խիստ մասնագիտական հետախուզումներ կատարողներին են մատչելի, մեր սույն հաղորդումը ուղում ենք գլխավորապես նվիրել դրանց նախնական քննությանը: Ասում ենք նախնական, որովհետև նյութերն ամբողջությամբ հավաքելու և համակողմանի քննության ենթարկելու համար դեռ շատ ժամանակ կպահանջվի:

Երբ ուշի-ուշով քննության ենք ենթարկում այն տարիների գրական արտադրանքը, ապա նրանցում արտացոլված ենք տեսնում դարասկզբի հասարակական-քաղաքական տրամագրություններն իրենց վայրուվերումներով, հայոց քաղաքական ազատագրության ճանապարհին պատահած առաջընթացն ու անհաջողությունները, մեր պատմության այն տարիների ականավոր դեմքերի հերոսական գործերն ու եղբրական ճակատագրի դրվագները:

Այս առումով մեր հիմնական աղբյուրը հնօրյա բանաստեղծական տպագիր ժողովածուներն են և, հատկապես, հայկական ձեռագիր տաղարանները: Դժվար է պատկերացնել մեր հոգևոր կյանքի մակընթացությունների և տեղատվությունների մասին պատմող մեկ այլ, ավելի վստահելի գրական հու-

3 Ա. Ի. Իսահակյան, Երկերի ժողովածու, հ. IV, Երևան, 1951, էջ 118—119:

4 Լ. Ե. Պատմություն Երևանի հայոց թեմական հոգևոր դպրոցի, էջ 102:

շարձան, քան տաղարանները: Ժամանակի ու ազդեցության հոգևոր կյանքում տեղի ունեցած տեղաշարժերին ղուգրնթաց, շարունակաբար փոխվել է նաև նրանց բովանդակությունը՝ հոգվո, և մարմնի, և սիրո տաղերին համահավասար ընդգրկելով ազգի ու հայրենիքի ճակատագրի մասին պատմող բանքեր: Սկսած XIX դարից, թերևս և առաջ, Ֆրիկի ու Նրդնկացու ստեղծագործությունների, գուսանական տաղերի ու հայրենների, Աղեքսանդրի կամ Պղնձե քաղաքի պատմություններին կից կաֆաների փոխարեն, տաղարաններ են մուտք գործում նոր ժամանակների արտահայտություն հանդիսացող քերթվածներ՝ նվիրված ռուս թագավորին ու պետությանը, հնչում են օրհնանքի խոսքեր ռուս տերության ու միապետի արևշատության մասին, իբրև հույս ու ապավեն, տեր ու պաշտպան սառապող քրիստոնեության:

Մենք նկատի ունենք Գրականության և արվեստի թանգարանի № 46 գրքազրի «Տաղ ի վերայ կայսերն Ռուսաց» վերնագրով երեք քերթվածները, որոնցից մեկում, փառաբանվող հերոսը՝ Աղեքսանդր առաջին կայսրը, ի լուր աշխարհի ու հայության ազդարարում էր իր կամքը՝ հանդիսավոր խոսք տալով իրագործել հայ ժողովրդի քաղաքական ակնկալությունները:

Փոստոս սևաստոս կայսր համայն Ռուսաց,
Աղեքսանդր բայց օնանգր ահարկու բաղմաց
Յուսամ առ Աստուած, որ ձեզ աստ առած
Ի բանիլ յոազմաց, ի վերայ պարսկաց,
Հասուցանել զձէր բաղձանաց:

Մեջբերած բանաստեղծությունը գրված է մոտավորապես 1810 թվականին, այսինքն, ռուսների՝ 1804 և 1808 թթ. երևանյան անհաջող արշավանքներից հետո, որ նշանակում է, թե անգամ այդ պարագայում հայությունը դեռ փայփայում էր Ռուսիայից ակնկալվող ազատագրության հույսը և ավելի ամրուպնդում:

Քանի որ խոսք եղավ զարասկզբի անցքերի ու նրանց դրական արձագանքների մասին հայ-ռուս քաղաքական հարաբերությունների ոլորտում, նկատենք, որ նույն շրջանում է հյուսվել նաև «Տաղ ի Ռուստոմ-բեկ» հերոսական ասքրայն քաջարի հայորդու մասին, որ օգնություն ու աջակցություն էր ցույց տվել 1804-ին երևան արշավող ռուս ղեկավարին, նույն տարվա ամռանը, Փամբակի ռուս զորահրամանատար մայոր Մոնտրեզոյի հետ, Տփղիս վերադառնալու ճանապարհին, Ղարաքիլիսայի մոտ, թուրք հրոսակների և վրաց վտարանդի արքայազն Աղեքսանդրի մատնությամբ գերի ընկել պարսից ձեռքը, ապա՝ 1805-ին, նահատակվել Թավրիզում: Այս տաղի մեջ մենք ականջալուր ենք դառնում հերոսի վերջին խոսքերին՝ նահատակությունից առաջ ասված Աբաս-Միրզայի ատյանում:

5 ԳԱԹ, Հավաքածու երգերի և երաժշտական նյութերի, տաղարան № 46, էջ 20: Մեջբերած տողերի հեղինակն է Սերովբե Պոլսեցին (Պատկանյան): Տաղերից մյուսի սկսվածքն է՝ «Պետութեամբ՝ և ինքնակալ կայսերութեամբ...», դարձյալ Սերովբեի հորինածը (ն. տ., էջ 18—19), երրորդինը՝ «վերառաքեմք առ Աստուած զաղերս մեր և հառաչեմք...»: Առաջին տաղը, դժբախտաբար, դուրս է մնացել Ս. Պատկանյանի երգերի հետմահու ժողովածուից: Հաջորդ երկուսը տե՛ս «Ծրագրե Սերովբե վարժապետի Պատկանյան», ի լույս ընծայեաց աշխատասիրութեամբ Անտիբաջ Խազադեանց, Մոսկուա, 1857, էջ 49—52:

Մի՞ ճողառաջիբ պատմե՛կ ի՛նչ կայս յորդուց յորդի,
Թե՛ քաջն Ռուստում վասն Հայրենեաց ի սպանդ վարի.
Թե՛ պէտ ցաւիմ՝ զի չմեռանիմ ի մարտ ընդդէմ
Թշնամեաց իմ...
Միայն սըղամ, զի կապեալ կամ. Թե՛ միւսանգամ
Հրացան՝ սուր իմ
Ի ձեռս ունի՝ ըրբազուկ իմ ձեզ ցուցանեմ...⁶

Մեռանիմ ի քեզ՝ ժամանակ անցեալ՝
 ժամանակ շրոյ իմոյ դիւցազանց.
 Ո՛հ, ո՞ տայր ե ինձ՝ անզ դիմ շերմ արիւն
 Հեղոյի ի լերկրի Վարդանայ յանուն...⁷

Ն՞րբ տեսցեն նեղեալ որդիք Արամեան
Յաշխարհի իւրեանց լոյս, խաղաղութեան.
Ն՞րբ սփոփեսցին անյոյս զերգաստանք
Ի դառն հարուածոց՝ անանց, անվախճան...

Ե՞րբ ծագեցցի լուս բո յամպս վայոց,
Զոր դեմք լալագնեալք ամբառնան առ քեզ.
Ե՞րբ ելցես սրտից խոր ցաւագնեւոց
Արև Արմենիալ՝ որ մտեր անտես...⁸

⁶ «Բաղմամբեպ», 1847, № 2, էջ 39—41: «Բնար Հայկական», Պետերբուրգ, 1868, էջ 505—506: Դ. Շիրմաղյան, Նյութեր աղգային պատմության համար, երևելի հայկազանք, Պարսկաստան, Թուսթուր, 1893, էջ 192—193, 197, 199: Վ. Մելիքյան, Վրաց աղբյուրները հայերի և Հայաստանի մասին, Կ. III, էջ 230: Իբրև հանրուղակի աղբյուր՝ Նով. Հայկյան, Ուղեգրություններ, Կ. Ջ, Երևան, 1934, էջ 517—518:

1. Խ. Ա. Բոսովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. I, Երևան, 1948, էջ 16:

8 Նույն տեղում, էջ 17:

կետի հասնելով՝ արձակվեցին պատերազմի սանձերը: 1826 թ. հուլիսի 16-ին սլավթեց ռուս-պարսկական պատերազմը: Ասպարեզ եկավ մի արյունոտ ու դաժան իրականություն, որին հայերը ականատես էին եղել իրենց պատմութիւն ամենամոռաց շրջաններում միայն:

Պատերազմի տառջին ամիսներին ռազմի աստվածը պարսիկներին էր հովանավորում, որոնք դաշնակից ունենալով Անդրկովկասի խաւարամուկ մահ-մեղականութեան ու հետադեմ ուժերին և ձեռքերն ազատ զգալով՝ սկսել էին թալան ու կոտորած, գաղթ ու գերեւարություն: Այրարատյան աշխարհի գլուղերի մեծ մասը դատարկվեց, բնակիչները տենդագին թափով քշվեցին դեպի Մակվի ու Բայազետի խանություն: Այս դիպվածներն իրենց ռեալիստական նկարագիրն են ստացել Կարապետ անունով մի անհայտ տաղասացի՝ նույն օրերին հյուսած սրտամորմոք երգի մեջ, որ մեր ժողովուրդը երգում էր անգամ ոչ վաղ անցյալում:

Հասան խանի գարդ ու բալեն մեղ բերուց, աման, Բայազիդ,
Ֆիքր արուց մտքի միջին, որ տանի Թեհրան՝ Բայազիդ:

Ռուսն եկավ Ապարանն, առաջն կտրեց բորանն,
Բարձեցինք քոչ ու քուրանն՝ հկանք քեզ սեհրան՝ Բայազիդ:

Որ եկանք Արազի ափն, կտրվեց ճուներիս թափն
Վառեցինք յավշան ու չոփն՝ ծովսն արինք դուման՝ Բայազիդ:

Այրածո դամիշ ու յավշան, չի գտնվում հացի նշան,
Գերիդ երթա Հինդ ու Քյաշան, դուն երթաս Թեհրան՝ Բայազիդ:

Կարապետն ասաց խոսքի սաղն, չորացավ բաղչան ու բաղն,
Քանդեցին այլան օթաղն, ափսոս երևան՝ Բայազիդ⁹:

Մենք միայն պատառիկներ բերինք գեղջուկ ասացողի պարզունակ երգից, ուր այնպես բյուրեղացված ձևով է ներկայացված հայոց օրհասական ու ժանր վիճակը, որ կարող է շարժել իսկական արվեստագետի նախանձը: Նույն շրջանում հորինված մեկ այլ քերթվածի մեջ, հեղինակը, որն արդեն ներսիսյան դպրոցի բարձր դասարանի աշակերտներից է և դիտակ քերթության սխոլաստիկ կանոններին, պահ մի սղալով հայոց դառը վիճակը, այնուամենայնիվ փայփայում է հույսի մի անմարելի շող, որ գալիս էր Ռուսիայից:

Սիրածին Որդիք՝ Մանկունք կաթնասունք՝ Սուրբ էջմիածնի,
Արդ լալով շրջեն՝ հեծեն, հառաչեն՝ ի յօտար վայրի,
Ի հնոց երկաթի՝ բարբարոս Պարսից՝ միշտ ի վտանգի,
Ակնունին փրկչի՝ նոր ինքնակալի՝ Որդույ Պօղոսի:

⁹ Նոր քնար Հայաստանի, ի լոյս ընծայեաց Ո. Հովհաննիսեանց Երևանցի, տետրակ Ե, Մոսկուա, 1859, էջ 22—23: Երգը թեպետ խորագրել են՝ «Գաղթականութիւն ի 1828 ամի», բայց թվականը ակնհայտ սխալ է, պետք է լինի՝ «ի 1827 ամի», քանի որ, պատմական վավերագրերի համաձայն, Երևանի և շրջակա գյուղերի հայոց գաղթը տեղի է ունեցել 1827 թ. ապրիլին (տե՛ս Պ. Հ ա կ ո ս յ ա ն, Խաչատուր Աբովյան. կյանքը, գործը, ժամանակը, Երևան, 1967, էջ 198 և 258—259):

Սա նիկողայոս՝ յԱծուստ ընտրեալ՝ Կայսր համայն Ռուսաց,
Ունի տարածել՝ կարկառել անշուշտ՝ ղբաղուկ փրկանաց.
Առ անկեալ գլորեալ՝ և ամայացեալ՝ Տունն Ասքանազեանց,
Եւ փոյթ աղատել՝ ղազգ մեր տառապեալ՝ ի ժանեաց չարաց¹⁰:

Այսօրինակ հույս և հավատ կար նաև ժամանակի պայծառ մտածողներից մեկի՝ բանաստեղծ Հարություն Ալամդարյանի հոգում, երբ նա, Տփղիսի Վանքի մայր եկեղեցու զավթում, օրհնում էր Հայոց գնդի դրոշակը և ճանապարհ գրնում կամավոր զորքին դեպի ռազմաճակատ՝ դեպի Երևան, այս հուսադրական խոսքերով. «Աջ տեառն՝ որ ցարդ կոփեր զմեզ, այժմ սրբէ ղարտասուս մեր, կանգնէ զմեզ յանկմանէս մերմէ. բանայ ղդրունս ճոխ ողորմութեանց իւրոց և գթութեանց ի ձեռն գերամբարձ օծելոյ իւրոյ ամենաբարեպաշտ օգոստապերճ կայսեր մերոյ: Դարձուցանէ զսուգ մեր յուրախութիւն, ղերծու ի մէնջ ղքորձ մեր և ղգեցուցանէ մեզ զուրախութիւն:

Սքանչելի է աստուած ի շաւիղս իւր, սքանչելի է և օգոստափառ օծեալ նորա՝ խաղաղութիւն և մխիթար որբացելոյն Հայաստանի: Բարութիւնն աստուծոյ և օծելոյ նորան ոչ շատ համարի ղարձուցանել մեզ ղկորուստ մեր. ոչ բաւական համարի վերականգնել զմեզ յանարգութենէ մերմէ, ոչ շատանայ ապաքինել զվէրս մեր, այլ անզննին տնօրէնութեամբ իւրովք խրախուսէ զմեզ՝ զտառապեալ որդիքս Հայաստանի ի գործակցութիւն ազատութեան մերոյ, նորոգութեան ամենասիրելի Հայրենեաց մերոց ի բազմադարեանն իւրոց փլատակաց...»¹¹:

Մեր ընթերցողներին թող չսարսափեցնեն «աստված», «կայսր» և նման բառերը, կամ էլ տարակուսանք չպատճառի, որ մեջբերվող հատվածները գերազանցապես գրաբար են, այն էլ առանց գեղագիտական քննության: Խնդիրն այն է, որ առկա նյութերը հայոց նոր գրականության խանձարուրային շրջանից են, ուստի և սպասել կատարյալ գեղարվեստական գործեր, կլինեն անարդարացի: Բացի այդ, արտացոլվող դարաշրջանում մարդկանց մտածողության վրա դեռ իշխում էին միջնադարականությունը, գրաբար լեզուն և հոգևոր բանաստեղծության ձևերը, և դարասկզբի քերթողներն ու ճարտասանները եղած կաղապարներով էին հյուսում իրենց ոտանավորները:

Ռուս-պարսկական պատերազմի հետագա անցքերը ավելի մոտեցրին հայոց ազատության բաղձալի ժամը: Երբեմնի երկմտանքն ու ողբը սկսեցին տեղի տալ ինքնավստահ, հրճվալի ու կրքոտ խոսքերի: Մեզ է հասել 1827 թվականի վերջերին հորինված մի բանաստեղծություն՝ «Յազատութիւն Մայր Աթոռոյն մերոյ սրբոյ էջմիածնի» խորագրով, որի անանուն հեղինակը օգտագործել է ժողովրդական վեպի ոճական հնարները: Ռուս կայսրը կովի ասպարեզ իջնելով՝ սպառնում է պարսիկներին՝ հայերին տալ ազատություն, այլապես կջնջի նրանց ամբողջությամբ: Հայերն ևս ոգևորվում են կայսեր խոսքե-

¹⁰ «Երախայրիք ներսիսեան դպրոցի», Տփլիս, 1828, էջ 13: Մեջբերված տողերի հեղինակը Մովսես Վարդանյանն է: Դրված են՝ 1827 թ. հունվարին:

¹¹ ԳԱԹ, Ե. Շահազիզի հավաքածու, բաժին 4-րդ, № 2, «Բան ասացեալ յաւուր օրհնութեան դրոշակի և երդմնեցուցանելոյ ղինքնակամ գունդ ղինուորութեանն Հայոց»: Ծառի բնագիրը Ա. Արարատյանի ձեռքով է, իսկ լուսանցքներում, Հ. Ալամդարյանի ձեռքով, պարբերությունների վերջերին, նշված են ասվելիք սաղմոսների և Ս. գրքի այլևայլ ընթերցումների թվահամարները: Հրատարակված է՝ «Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում», մասն Բ, աշխատասիրեց Աղ. Դ. Երիցյանց, Թիֆլիզ, 1894, էջ 272—274:

րից և համախմբվելով՝ մխրճվում մարտի մեջ: Համընդհանուր ջանքերով խորտակվում է պարսից ուժը, ծունկի է գալիս Երևանը. հայերը մտնում են իրենց հայրենիքը, իսկ ուռա դորքը՝ պարսից հողերը:

Արքայն Ռուսսիոյ Հայր Հայաստանի միշտ հոգաբարձու,
Անցեալ յասպարէզ մեծի յաղթութեան ձայնէր ահարկու:

Կա՛մ՝ սէր հաշտութիւն և Ազգին Հայոց լի ազատութիւն,
Կա՛մ արինահեղ սաստիկ մարտ, զի իմ մե՛ծ է բարկութիւն.
Լաւ է կորիցուր ազգաւ ի դաշտի, և Հայք ասացին,
Քան թէ կորուսցուր զանուն յաղթութեան անձին ի յանձին:

Ասացին, և անգ սարսեցաւ Ապպաս խոցեալ ի սրտին
Ինքեանք Հայկազունք ցուցին զքաջութիւն ի սաստիկ մարտին,
Անդ Երևանայ պարիսպք երկնամբարձ հալեցան, անկան,
Հայք ի հայրենիս, Ռուսք ի տուն Պարսից մտին անսասան...¹²

1827 թվականի հոկտեմբերի 1-ին ընկավ Երևանի բերդը: Արևելյան Հայաստանը ազատագրվեց պարսից դժոխատեսիլ գերությունից: Այս լուրը կայծակի արագությամբ հասավ ամենահեռավոր հայ գաղթօջախները, ու շատ շանցած, ամեն կողմից լավեցին արձագանքներ, հասան ողջույնի խոսքեր, ուրախության կանչեր:

«Աչքըներդ հազար լույս, որ մեր քաղցր Աշխարհքն Պարսից դառն շարշարանքիցն ազատվեց, Քրիստոնի Տերության ներքո ընկավ: Փառք բարերարին Աստուծո, որ այսուհետև ավել նեղություն չենք ունենալեց, ազատ քաղաքի քաղաքացի պիտի անվանիք, ձեր ազգասիրության իմաստասիրության լուրն, և արվեստից հառաջադիմությունն բոլոր աշխարհ պիտի տարածվին:

Իմ լա՛վ Քաղաքացիք, էտպես երջանիկ բախտ, որ գուր եք պատահել, կարծեմ, որ մեր նախնիքն ևս Արշակունի թագավորության ժամանակումն էլ չէին պատահել. զերա՛ թեպետ և թագավորությունն յուրյանցն էր, սակայն բարբարոսություն և զուլումն պակաս չէր...»¹³:

Խանդավառ ու կրակված հոգով, բայց և խորին համոզումով, հայոց պատմության մեջ տեղի ունեցած շրջադարձի ճշմարիտ գիտակցությամբ՝ Հնդկաստանի Կալկաթա քաղաքից գրում էր ժամանակի հայ լուսավորական շարժման պարագլուխներից մեկը՝ բանաստեղծ Մեսրոպը Թաղիդյանցը: Շնորհավորանքի ու ողջույնի այս և շատ ուրիշ նամակներից բացի, ականատեսների վկայությամբ, Երևանի և Արևելյան Հայաստանի ազատագրության օրերին, բացվում է նաև բնաշխարհիկ ժողովրդի համրացած լեզուն, հորինվում են հայերեն ու այլազգ լեզուներով բազմաթիվ երգեր՝ ուսանների սիրանքը և հայերի երջանկությունը փառաբանող: «Հարիր տեսակ խաղ հայերեն, թուրքերեն

¹² «Մուգայք Արարատեան», Մոսկով, 1829, էջ 159—160: Տաղը անանուն է: Հեղինակը Մոսկվայի Լազարյան ճեմարանի աշակերտներից կամ ուսուցիչներից որևէ մեկը պիտի լինի:

¹³ Մատ., ԿԳ № 61/788 և «Մասեաց Աղանի», 1863, էջ 172—173: Նամակը գրված է 1828 թ. նոյեմբերի 1-ին, էջմիածին է հասել 1829 թ. փետրվարի 2-ին:

երեւանու բաղերն ու ձորերը լսում էին», — ասում է ժամանակակիցը¹⁴։ Հայկական տաղարանները և տպագիր աղբյուրները այս առումով մեզ առատ նյութեր են ընձեռում, մի կողմ թողած, որ շատ երգեր էլ, ժամանակին գրի առնված չլինելով՝ մոռացվել, ջնջվել են հետնորդների հիշողութունից։

Ահա՛ մի քանի տող այդ գեղջուկ տաղերից, Աբովյանի դրամամբ.

Սար ու ձոր սասանմիշ էլան, զարմացան,
Պասքովիչ սարդարին ոտի տակն ընկան,
Մեր Մասիսն, Ալադյադն փանդաղ էլան...
Մաղաթովն Ղարաբաղ առավ ալատեց,
Կրասովսկին Աբարան ոտնատակ տվեց,
Սաղ Իրանն Պասքովիչին չոբեց, ծունր դրեց,
Ղզլբաշն մուկ դառած՝ գլխին վայ տվեց.
Բենկենդորֆն սարդարին ջախսրփուրթ արեց,
Ասլանի գլուխն արծվին Ռուսն մատաղ արեց...
Թշնամին քոռացավ, Հայքն ուրախացան,
Հայ աղդի աղոթքը երկինքը հասավ...¹⁵

Ահա՛ մի նմուշ՝ քաղված հնօրյա տաղարաններից, թուրքերեն լեզվով, բայց հայ բանաստեղծի՝ աշուղի, հորինած.

Նիզովայ Պավլովիչի թախդընայ համ թաճընայ դուրբան
Հյոթմի հար փաղիշալդան ալդդի խարջընայ դուրբան
Ամրդդի Պասկևիչայ եղտդի իլաջընա դուրբան և այլն¹⁶։

Վերջապես մեկ նմուշ էլ ավելի դրագետների՝ այսինքն, տիրացուների հորինածներից՝ «Տաղ ի վերայ Նիկոլայ Պավլովիչի», որ կարծես ձևված լինի սուրբ ճգնավորներին նվիրված հին տաղերի վրա։

Ի հոգույն սրբոյ օծեալ թագաւոր
Գեր քան զՏրդատ յաղթող զօրաւոր
Երկրորդ Սողոմօն արդար դատաւոր
Աղգիս Արամեան թուլալիօթ (?) ամուր,
Ո՛վ տէր իմ Յիսուս, պահեա՛ անսասան,
Մեծ կայսր Նիկողոս, յաղթող ինքնակալ

Կարող զօրութեամբ ամենաղօրին
Սասանեցուցէր ազնի Իսմայէլին,

¹⁴ Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. III, Երևան, 1948, էջ 117։

¹⁵ Նույն տեղում, էջ 117—118։

¹⁶ Աշուղական այս ներբողից մեզ ծանոթ է երկու տարբերակ. մեկը՝ Խ. Աբովյանի գրառմամբ և որպես հեղինակություն հայազգի, թուրքագիր աշուղ Հաջի Յուսուֆ Մելիք-Շահնազարյանի (տե՛ս ԳԱԹ, Խ. Աբովյանի թողոններ, № 62), մյուսը՝ Գրականության և արվեստի թանգարանի № 47 տաղարանում, անանուն։ Առաջինը հրատարակված է մի քանի անգամ, կից հայերեն թարգմանությամբ։ Գոյություն ունի նաև գերմաներեն թարգմանությունը (տե՛ս Խ. Աբովյան. Երկերի լիակատար ժողովածու, հ. VII, էջ 348—349 և 355—356; F. Bodensiedt. Tausend und ein Tag im Orient, 3-րդ հրատարակություն, Բեռլին, 1865, էջ 125)։ Երկրորդը անտիպ է (տե՛ս ամբողջությամբ՝ ԳԱԹ, Հավաքածու երգերի և երաժշտական նյութերի, № 47, թ. 31ա-բ)։ Մեջբերված տողերը երկրորդ տարբերակից են։

Որպէս Գեղէհօն զհին թշնամին
Տանս Արամեան նորոգող կրկին
Ո՛վ տէր իմ Յիսուս... և այլն¹⁷:

Հայերեն ու թուրքերեն այս երգերին, անցած զնացած օրերում, միախառնելով ու՛մ էին ռուս ղինվորական երգերը պատերազմական սխրանքների և քաջարի հայ զորավարների մասին:

Генерал храбрый Мадатов
Нас к победам поведет.
О! военные ухватки
Персов знает напролет.
Под командой их не страшно
Хоть врагов и больше нас...¹⁸

Հիշյալ երգերի կողքին հորինվում են բազմաթիվ բանաստեղծություններ ևս, որոնց հեղինակներից յուրաքանչյուրը յուրովի էր ըմբռնում կատարվածը, իր զնահատականը տալիս.

Զի անցին ահա՛ խորին հառաչանք՝ պարելիք թախծութեանց
Ցնդեցան ի հօդս՝ զըմբաղք երկրիդից՝ տազնապք Հայրենեաց...

ասում է մեկը (Հ. Շ. Վարդանյանց)¹⁹:

Գերիք դեգերեալք՝ իբր ի դոխոց՝ ազատեալ զերծան,
Վիշտք, տազնապք, արհաւրք՝ անհետ, աննշմար՝ զխնովին բարձան:..

կրկնում է մյուսը (Ա. Ա. Արարատյան)²⁰:

Ահա՛ վերստին՝ բոցափայլ լուսով՝ Հայաստան պճնի,
Գետ դառն արտասուաց՝ բազմամեայ վշտաց՝ յերեսաց սրբի.
Սիրտ նորա նեղի՛ մահաւէտ վշտօք՝ այսօր տազնապի,
Արծիւ երկգլխի՛ հզօրն Ռուսսիայ՝ վրիժառու լինի...

կարծես եզրափակում է երրորդը (Ն. Տեր-Շմավոնյան)²¹:

Ընդհանուր ցնծության ու ոգևորության մեջ մեր քերթողները երբեմն կորցնում են չափի զգացումը և հայոց պատմության մեջ կատարված շրջադարձը ներկայացնում առանց արթուն մտքի ու սթափ նժարման: Ստացվում էր այնպես, որ Ռոմանովների զահր տիրելու առաջին վայրկյանից նիկողայոս կայսեր զլխավոր հոգացումն էր հայոց փրկությունը, կամ թե. «Հյուսիսի արծվի»

¹⁷ ԳԱԹ, Հավաքածու երգերի և երաժշտական նյութերի, № 46, էջ 80—82: Տաղի հեղինակն է Մանուկյան ազգանունով ինչ-որ քահանա, որ սակայն Հարություն Մանուկյան Ալամդարյանը չէ:

¹⁸ «Тифлиссские ведомости», 1829, № 48, սեպտեմբերի 28, էջ 2: Երգի սկսվածքն է՝ «Буря брани зашумела...»: Հայտնի է մեկ երգ էլ Ախալցխայի գրավման մասին, «Ночью ужасна наступила...» սկսվածքով (տե՛ս ն. տ., 1830, № 19): Կան և ուրիշ շատերը, որ կարող են հատուկ ուսումնասիրության նյութ դառնալ:

¹⁹ «Նրախայրիք ներսիսեան գպրոցի», 1828, էջ 23: Բանաստեղծության խորագիրն է՝ «Նուագերգութիւն առ 1828 տարի»:

²⁰ Նույն տեղում, էջ 27—28:

²¹ Նույն տեղում, էջ 22:

հովանավորության տակ անցնելն արդեն զխնովին վերացրել էր հայոց հոգևոր ու տնտեսական զարգացման առջև ընկած բոլոր խոչընդոտները:

Ո՛ւր է Քաջազգի՝ Հայկ մեծ առաջին՝ սատակիլ Բելայ,
Զարթիցէ՛, տեսցէ՛ տօնեսցէ ընդ մեզ՝ զայս հանդէս ներկայ,
Զի նիկողայոս՝ Արփի շնորհալոյս՝ Երկնընտիր Արքայ,
Կամեցաւ, բաշխեաց՝ զանճառ փրկութիւն՝ տանն Արարատայ:

Այն ինչ եղ ի զուխ՝ ըզփառաց պսակ՝ մեծ Կայսրութեան,
Կանուխ ձեռն էարկ՝ ելանել, փրկել՝ զազն Ասքանաղեան.
Ահա քաջալանջ՝ արի Զօրականք՝ Նորայն Տէրութեան,
Հասանեն, տիրեն՝ Դավրէժ քաղաքի՝ ի սիրտ Պարսից տան:

Ո՛ւր են անառիկ՝ ամրոցք ամրակուր՝ ապաւէնք Պարսից,
Ընկճեալ խորտակեալ՝ ի վայր կործանին՝ ի թնդանօթից.
Մի թէ ըզզօրաց՝ բարբարոս ազանց՝ աստէն լոցիցի,
Որք արդ քաջ ծանեան՝ թէ Զօրաց Ռուսաց՝ Տէր է Մարտակից:

Զարթեցէ զարդիս՝ ճեմեսցէ հանդարտ՝ Քաջարին Տիգրան,
Հանցէ յերևան՝ զեօթնագլուխ վիշապն՝ զԴրօշակին նշան.
Թևովք հոլանի՝ Արծուին Հիւսիսոյ՝ հզօր, երկգլխեան,
Մայրապէս խնամէ՝ զանոյժ ձագս նորա՝ սիրով անպայման...²²:

Եվ այս ոգևորությունը շատ բնական էր: Սեփ շրջադարձի բաց արած հորիզոնները շատ էին գունագեղ: Ամենը չէ, որ կարողանում էին կռահել անակնկալ հետևանքները և սանձել իրենց արևելյան, վառվռուն երևակայության թռիչքը:

Հայկական հայրենասիրությամբ առևեցուն այս տողերը ցույց են տալիս, որ ոգևորությունն համընդհանուր էր, անկեղծ, վարակող:

Պարսիկների նկատմամբ տարած հաղթանակը Ռուսաց կայսրությանը դրդեց ավելի հեռուն նայել և Անդրկովկասում իր դիրքերն առավել ամրացնելու համար ավարտի հասցնել Պետրոս Մեծի օրերից սկսած ռազմական վեճերը Թուրքիայի հետ: Դա անհրաժեշտ էր ռուսների ազդեցության ընդլայնման համար ինչպես Բալկաններում, այնպես էլ Առաջավոր Ասիայում՝ առանձնապես Արևմտյան Հայաստանում:

Պատերազմը Թուրքիայի դեմ, ճիշտ է, այն արդյունքը չունեցավ, ինչ՝ Պարսկաստանի: Ռուսիան հարկադրված եղավ ետ վերադարձնել զրաված հողերի մեծագույն մասը և գոհանալ միայն Ախալցխայի և Ախալքալաքի գավառներով, պատմական Անի քաղաքի մատուցներով, ինչպես նաև իրավունքով՝ արևմտահայության գաղթի:

Այս մասին էլ հայ մուսան հորինել է Հոմերյան ոճով մի հանգերգություն՝ «Յաղատութիւն Հայաստանեայց»: Եվ որ խիստ ուշագրավ է, դրա հեղինակը Մխիթարյան վարդապետներից է, հայր Եփրեմ Սեթյանը: Վենետիկի հայրերն

²² «Երախայրիք ներսիւեան դպրոցի», էջ 19: Բանաստեղծության հեղինակը Մովսես Վարդանյանն է:

ևս ապրում էին այդ օրերին համահայկական շահախնդրություններով, իրենց ուրախությունն ու հրճվանքն արտահայտում, կանխատեսումներ անում հայոց պայծառ գալիքի մասին²³։

1828—30 թթ. ընթացքում, Արևմտյան Հայաստանի այլևայլ վայրերից, Ատրպատականից և Պարսկաստանի հայաբնակ գավառներից հազարավոր հայեր փոխադրվեցին Արևելյան Հայաստան, նոր կյանք տալով հնամենի, ամայացած գյուղերին ու կիսավեր քաղաքներին։ Սկսվեց հայ ժողովրդի ուժերի մի աներևակայելի համախմբում։ Հայության տարբեր հատվածների մերձեցումն ու փոխադարձ հարաբերություններն արթնացնում էին ինքնագիտակցության տրամադրություններ, պահանջ առաջադրում նոր լեզվի ու նոր գրականության։ Ռուսիան ազատել էր հայերին պարսից ու թուրքաց կեղեքումներից ու բարբարոսական յօրից, պարգևել անձի ապահովություն և խաղաղություն։ Ռուս կայսեր գալիսունի տուկ էր անցել պատմական Հայաստանի մի մասը, որ որոշ հույսեր էր ներշնչում երբևէ վերականգնված տեսնելու կորցրած պետականությունը։

Ոչ մեկն հայ գրողներից այնքան չի խորհել այս խնդիրների շուրջ, բանաստեղծական խորհրդածությունների նյութ դարձրել, ինչպես հաշատուր Աբովյանը։ Նա, որ պատանեկան տարիներից մտորում էր հայրենիքը օտար նվաճողներից ազատագրելու և դեպի Հայաստան մի նոր խաչակրաց արշավանք կազմակերպելու մասին, նա, որ տեսել էր ու մասնակից եղել իր ժողովրդի օրհասին՝ պատերազմի երախում ու գաղթականության մեջ, ամենից պարզ էր սպասկերացնում կատարվածի պատմական վեհ նշանակությունը։

Աբովյանի անձնական տենչանքները հիմա ներհյուսվում էին հայերի համազգային ձգտումներին։ Նա գտնում էր իր համար նոր հենարան և ենթագիտակցորեն զգում, որ այժմ, քան երբևէ, անհետաձգելի պիտի լինի հայրենիքի ու հայրենակիցների լուսավորության խնդիրը, որին հանգամանքների բերումով նպաստում էր Ռուսաստանը։ Հասարակական-քաղաքական այս իրադարձությունների ծնունդ եղավ Աբովյանի լավագույն ստեղծագործություններից մեկը՝ «Խնդամիտ զգացմունք երախտագէտ Հայկազին՝ յազատութիւն հայրենեաց իւրոց»²⁴։

«Խնդամիտ զգացմունք...» աչքի է ընկնում հստակ գաղափարներով ու գեղարվեստական ինքնատիպ ձևերով և թերևս լավագույնն է այդ իրադարձությանը նվիրված ստեղծագործությունների շարքում։

Ազատագրված հայրենիքը բանաստեղծին երևում է իբրև «տեսարան անլուր» և «հանգէս նորահրաշ»։ Այլևս չեն երևում պարսից տիրապետության օրերին բնորոշ դեմքեր ու դիպվածներ, չքացել են՝ «Կռոնոսի մանգաղը» և «հահի ստվերը»։

23 Ծանոթ է այս հագներգության (գրված է՝ 1830 թ. հունվարի 19-ին, Կարինում) երկու արտագրության, մեկը՝ հաշատուր բեկ Շահնազարյանցին պատկանող դավթարում (այժմ պահվում է՝ ԳԱԹ, Խ. Աբովյանի թղթեր, № 157), մյուսը՝ Մատենադարանում, Աղ. Երիցյանցի հավաքածուի մեջ (Ն՝ 156/131 և 151)։ Առաջինի գրիչը թերևս նույն հաշատուր բեկն է, երկրորդի արտագրողը՝ Աղ. Բախրյանցը, որ օգտվել է Մ. Մսերյանցի պատճենից։ Բանաստեղծությունը մեր օրերում սխալմամբ վերագրված է Խ. Աբովյանին և տպագրված վերջինի երկերի լիակատար ժողովածուի մեջ (հ. 1, էջ 52—54)։ Այդ մասին տարիներ առաջ դրել ենք («Պատմա-բանասիրական հանդես», 1960, № 2, էջ 111)։

24 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, էջ 21—23։

Յերազի՞ր իցեմ, ի քո՞ւն, թէ յանուրջս, ա՞յս է Հայաստան...

Հիփոթված հարցնում է բանաստեղծը և ապա շարունակում տալ նոր հարցեր, որոնք նախորդ կապակածը փարատելով հանդերձ առիթ են դառնում նոր տարակուսանքների:

Ո՞ւր այն զառամեալ դէմք՝ իմ Հայրենեաց, որ կայր ի վշտի,
 Ո՞ւր ողբ, սուր և լաց հնոց և նորոց ի մերում գնդի.
 Ո՞ւր դառն արտասուք, կոծ և հառաչանք աղէխարշ ձայնի,
 Ո՞ սրբեաց, եբարձ, ի՞նչ փարատեցան և շեն լսելի...

Երկնային պատգամախոսն ավետում է շվարած պատանուն, որ այդօրինակ բարիքների համար ինքն և իր ժողովուրդը պետք է ելախտապարտ լինեն «Մեծին Ռուսիոյ» և ուսաց կայսեր, որոնց մուտքը Հայաստանի երբեմնի անապատներն ու ավերակները, ժայռերի խոռոչներն ու այրերը ժողովրդի թափառական դավակների համար դարձրին «հանգստեան տեղի և դադար», որոնց մուտքով «հանգեան, լռեցան ի մերոց սրտից լալիք և կական» և ծագեց հայության համար «առաօտ փրկութեան»: Եվ բանաստեղծը ներբողում է.

Ո՞հ, դարձեալ քանի՞ քան զքեզ եզիտ ինքեան պարագլուխ,
 Ո՞հ, չքնաղ գարուն, ուր հասեալ յորդէ աղբիւրդ շնորհաբուլիս:
 Երթան, անցանին, հաշին, խորտակին ամբ և ժամանակք,
 Այլ ո՞չ ի մերոց սրտից անցանին ձեր քաղցր յիշատակ...

«Խնդամիտ զգացմունքը» ապացույց է Աբովյանի դադափարական հասունության և քաղաքական հեռատեսության: Այն ժամանակ արդեն նա ըմբռնում էր Ռուսիայի բախտորոշ գերը հայ ժողովրդի կյանքում, ներբողում էր հայերի ազատարարներին և հավերժ բարեկամության ու հավատարմության խոստում տալիս.

Սուրբ եղիցին մեղ կաթիլք ձեր արեան և արդար քրտանց,
 Որք զոհք մատուցան և պատանք եղեն անկեալ հայրենեաց...

Այստեղից մինչև «Վերք Հայաստանի» նշանավոր «օրհնվի են սհաթը...», չնչին տարածություն էր մնում: Իր քաղաքական համոզումներով «Խնդամիտ զգացմունք» բանաստեղծության մեջ Աբովյանը ուսաստի է և հայության երջանկության և ազգապահպանման գլխավոր պայմանը համարում է Ռուսիայի դաշնակցությունն ու հովանավորությունը:

Ինչպես մեր օրերում Զարենցին, այնպես էլ հայոց նոր գրականության սկզբնավորման տարիներին՝ Աբովյանին, անկարելի է բաժանել իր դարից ու ժամանակից: Աբովյանը հայոց պատմական բախտի մեջ կատարված շրջադարձի ամենամեծ երգիչն է: Նրա ողջ ստեղծագործության միջով կարմիր թելի նման անցնում է Ռուսաստանի հետ բարեկամության անխախտ պահելու գաղափարը, Ռուսիայի հովանավորությունից օգտվելով՝ տնտեսական թշվառությունից ու հոգևոր ստրկությունից հայրենակիցներին փրկելու տազնապալի հոգսը: Այս մասին են պատմում «Նոր ի՞նչ են այս ցոյցք մերս Հայաստանի...», «Մուտ Հայկայ ի Հայաստան և արհաւիրք երեակայութեան նորա», «Երեակայութիւն ի վերայ ճանապարհորդութեան ի լեռն Արարատ», «Մտածմունք ի

տևսիլ հայրենեաց» և «Մուտ ի հայրենիս» բանաստեղծությունները²⁵, գործեր, որոնք իրենց զաղափարական նպատակաուղղվածությամբ ու բարձր արվեստով, անկեղծությամբ ու ճշմարտացիությամբ մի ամբողջություն են կազմում «Վերք Հայաստանի» պատմավեպի, Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացնելու դարաշրջանը հավերժացնող անմեռ էպոսի հետ:

Գրական-պատմական հին ու նոր բոլոր հետազոտություններում, հավուր պատշաճի ամեն մի հանգեսում կամ երեկույթների ժամանակ, սովորություն է դարձել վերակրկնել Աբովյանի մարգարեական բառերը, կամ էլ հայ և ռուս ժողովուրդների բարեկամության մասին պատգամող առանձին ասույթներ: Չցանկանալով կրկին քաղել այդ հանրահայտ խոսքերը, այնուամենայնիվ հարկ է ասել այսքանը, որ «Վերք Հայաստանին» Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու և պարսիկների ու թուրքերի լծից հայ ժողովրդի մի խոշոր հատվածի ազատագրման պահը հավերժացնելուց բացի, նաև առաջին հայերեն գիրքն էր, որ պատմում էր հայ զեղչուկ ժողովրդի մասին, աշխարհին ու մարդկանց ցույց տալու համար, թե ինչ սրեր կան ցցված հայերի սրտում, և թե ինչ են արել նրանք Հայաստանը Ռուսաստանի տիրապետության տակ անցնելու համար մղվող կռիվներում: «Ինչ որ Պարսից կովի ժամանակին Հայք արին, աստուծո է հայտնի... թե մարդ չիմանա, քարերը վկայություն կտան: Հալբաթ որ մեկ օր մեկ արդար, անաչառ մարդ Վրաստանու պատմությունը կգրի, էն ժամանակը կերևա, թե Հայք ի՞նչ արին, ի՞նչ հավատարմություն են ցույց տվել տերությանը, ի՞նչ արին էն վեր ածել», — գրել է Աբովյանը²⁶:

Ազասի, Գրիգոր Մանուչարյան, Արծափեցի Մանուկ, Թումանյան Հովակիմ, շուրավերցի Սոս և Օհանջան, Ներսես Աշտարակեցի, գեներալներ Մադաթով և Բենճուրյան, գնդապետ Սմբատյան, ահա մի քանիսր ժողովրդական հերոսներից ու տիտղոսավոր հայորդիներից, որոնց՝ ռուս-պարսկական պատերազմի տարիներին կատարած սխրագործությունները զարդարում են Աբովյանի վեպի, ինչպես նաև Ռուսաստանի անդրկովկասյան արշավանքների պատմության հերոսական էջերը:

Հինելով դժգոհ անցյալ դարու 30—40-ական թթ., Հայաստանը Ռուսաստանին միացնելուց մի տասնամյակ անց երևան եկած հայության հոգևոր լճացումից ու մեր մտավորականության հանցավոր անտարբերությունից, այնուամենայնիվ, որպես մեծ արվեստագետ, «Վերք Հայաստանի» վեպում Աբովյանը հարազատ մնաց հայության պատմական ձգտումներին ու դարաշրջանի ոգուն, որոշակիորեն ընդգծելով ռուս ժողովրդի հետ մշտապես բարեկամական կապերի մեջ մնալու անհրաժեշտությունը, իբրև Հայաստանի տնտեսական ու հոգևոր զարգացման նախապայմանի: «Օրհնեցե՛ք Ռսի ոտը, ջանջանի տվե՛ք, իրար սիրեցե՛ք», — պատգամում էր նա²⁷, քանի որ «Ռուսք Հայաստան կանգնացրին ու ասիացվոց բիրտ, զազան աղգերին մարդասիրություն ու նոր հոգի տվին»²⁸, քանի որ «իրանց ոտքը որտեղ որ մտնի, էնտեղ բախտավորություն ու խաղաղություն պետք է ըլի»²⁹:

25 Տե՛ս ն. տ., էջ 329—330, 56—63, 47—51, 213—216, 244—245 (էջերը մատնանշված են ըստ բանաստեղծությունների հերթականության):

26 Խ. Աբովյան, նրկերի լիակատար ժողովածու, հ. III, էջ 121:

27 Նույն տեղում, էջ 55:

28 Նույն տեղում, էջ 180:

29 Նույն տեղում:

Հայոց հետագա պատմության ընթացքը հաստատեց Արովյանի կանխատեսումների ճշմարտությունը և հիմա էլ պարտազրուժ է մեզ՝ ունկնդրել մեծ հայրենասերի ձայնին, շեղվել նրա մատնանշած ուղուց:

ПРИСОЕДИНЕНИЕ ВОСТОЧНОЙ АРМЕНИИ К РОССИИ И ЕГО ОТРАЖЕНИЕ В АРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЕ ПЕРВОЙ ПОЛОВИНЫ XIX ВЕКА

П. О. АКОПЯН

Р е з ю м е

Обращаясь к вопросу о присоединении Восточной Армении к России, наши историки и литературоведы рассматривают исторический роман Х. Абовяна «Раны Армении» как единственное литературное воплощение этого факта. Исследуя старинные песенники и поэтические сборники, автор показывает, что к данной теме армянские поэты обращались уже в первые годы вступления русских в Закавказье.

В статье проанализирован ряд прозаических и поэтических произведений, созданных в период русско-персидской войны и присоединения Восточной Армении к России, авторы которых жили и творили как в Армении, так и в Тифлисе, Москве, Венеции и Калькутте.